ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05 դեկտեմբերի 2019թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վիլեն Գիշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Արշավիր Մարության

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի NN 1,2 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 26.11.2019թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 03-ին, ժամը՝ 11:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում անիվների ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի 03 դեկտեմբերի ժամը՝ 11:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ NN 1,2 չափաբաժինների մասով նիստը կասեցնել և «Արպանիվ» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ NN 1,2 չափաբաժինների մասով «Արպանիվ» ՍՊԸ-ն ներկայացրել էր գնային առաջարկ:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը պետք է տեղի ունենար 05.12.2019 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում, սակայն «Արպանիվ» ՍՊԸ-ից ներկայացուցիչ չներկայացավ միաժամանակյա բանակցություններին, գնային առաջարկը մնաց անփոփոխ:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում անիվների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով,էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի NN 1,2 չափաբաժինների գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի NN 1,2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արպանիվ» ՍՊԸ-ին, որի գնային առաջարկը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Ծանուցել «Արպանիվ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

2.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից, հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում, ՔԿ ծառայության մասնաշենքում, որը գտնվում է Արշակունյաց 63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Գիշյան

Գնահատող անդամներ

1 ---------- Հ. Հովհաննիսյան

2 ---------- Ա. Մարության

Քարտուղար՝ ---------- Ն.Աբովյան